



ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՈՒԺԵՐԸ ՆԱԽԱՊԵՍ ՆՇԱՆԱՓՈՐՁՎԱԾ ԴԻՐՔԵՐ ԳԱՅԹԱԿՂԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԵԼՈՒ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

«Դուք մտածում եք, որ պաշտպանությունում առաջացել է ճեղքվածք: Իսկ իրականում դա թակարդ է՝ «Բարի գալուստ» մակագրությամբ»

Հակառակորդի ուժերը գայթակղելու և հատելու մարտավարությունը մանրային պաշտպանության հիմնական մարտավարական առանձնահատկություններից է: Յուրայինների խնդիրն է ոչ միայն դիմավորել թշնամուն, այլ, մինչև նա հավատում է, որ հաղթում է, ստիպել նրանց մտնել այնտեղ, որտեղ երաշխավորված է ոչնչացման:

Հատկապես արդյունավետ է աշխատում քաղաքներում, անտառաշերտերում, խրամատներում և ռելիեֆային անցումներում:

Ինչպիսին է այս հնարքը իրականում. քայլ առ քայլ վերլուծություն

Քայլ 1. Պաշտպանությունում «Ճեղքման» պատրանքի ստեղծում.

- փոքր խմբերի դիտավորյալ նահանջ;
- ակտիվ ռադիոկապի և կրակի շեղում;
- «լքված» դիրքեր խայծերով (ուսապարկեր, մարտական լրակազմ);
- ռադիոթեր «խուճապային» արտահայտությունների կամ ճեղքման մասին զեկույցի արտանետում:

Քայլ 2. Ծուղակի պատրաստում .

- դիրքերը նախապես նշանափործվում են (ականանետներից, ՇՊԳ-ից, թներում գնդացիներից);
- ականապատվում են հակառակորդի հնարավոր նահանջի ուղիները;
- թները ծածկվում են կրակային խմբերով կամ քողարկված ճշտգրտող ԱԹՄ-ներով;
- ստեղծվում է այսպես կոչված «մահվան կրակային միջանցք»՝ նեղ հատված, որտեղ ամեն ինչ կարող է գնդակոծման ենթարկվել :

Քայլ 3. Հակառակորդը ներխուժելով անմիջապես կորցնում գործողությունների ազատությունը .

- նա արդեն «ծուղակում» է. յուրաքանչյուր մետրը նշանափործված է, շարժը՝ հսկողության տակ;
- հակառակորդը հարձակումը շարունակելու փոխարեն սկսում է կորցնել մարդկանց ու տեխնիկան;
- երբ փորձում է շրջվել հանդիպում է ականների կամ թիկունքից և թներից տեղատարափ կրակի;
- դրոն-կամիկաձեները աշխատում են կուտակված անձնակազմի վրա՝ վերջ տալով շփոթվածներին;
- գրոհայինների գլխամասը կտրված է հիմնական ուժերից :

Քայլ 4. Վերջնական ջախջախում և մաքրում.

- հրետանային ծուղակը փակվում է;
- գրոհային խմբերը ներխուժում են տեղի է ունենում կարճ մարտ՝ ճնշման համար;
- ավարտվում է մաքրմամբ և ավարի գրավմամբ :

Որտե՞ղ է հաջողությամբ կիրառվել

- ✓ Ավդիևկայում, 2023թվականին

Ուկրաինայի զինված ուժերը բազմիցս կիրառել են այս հնարքը արդյունաբերական գոտում: Նրանք նահանջել են երկրորդ գիծ, ստեղծելով ճեղքման տպավորություն, ապա սպասել են ռուսների կենտրոնացմանը, ապա կրակ են բացել նրանց ուղղությամբ՝ կիրառելով FPV դրոններից հաղորդված կոորդինատները:

✓ Բախմուտի ճակատում «կանաչ գոտում» աշխատելիս

Ուկրաինայի զինված ուժերը նահանջել են դեպի անտառային գոտի, որտեղ արդեն տեղակայված էին 2-3 ՇՄԴ և մի քանի գնդացրային բներ: Ռուսները ներխուժելով 15 վայրկյանի ընթացքում հայտնվել են խաչաձև կրակի տակ:

✓ Զապորոժյեի ուղղությամբ, 2024թվականին

Ականապատ ճանապարհին զրահատեխնիկայի պայթեցման սխեմայի կիրառում, որը օգտագործվեց «փախուստի» դիմած ուկրաինացիների կողմից: Ամբողջ տեխնիկան՝ տեսանյութում էր և կրակի տակ:

Ինչ պետք է հաշվի առնել այս տարաշարժը կազմակերպելիս

❖ Կազմակերպման բարդությունը:

Սա իմպրովիզացիա չէ, այլ տքնաջան աշխատանք, որի ընթացքում պետք է համակարգել կապավորների, դրոնավարների, ճշգրտողների և հաշվարկների միահամուռ գործունեությունը:

❖ Հաջողության բանալին քողարկումն է:

Խայժը պետք է լինի իրատեսական, հակառակ դեպքում հակառակորդը կույ չի տա այն: Եթե դա չափազանց ակնհայտ է, հակառակորդը կանգ կառնի, կհետախուզի և կհեռանա: Գայթակղող մարտիկը պետք է պատրաստ լինի զոհվելու կամ գոնե «զրո վիճակում» հայտնվելու մինչև հիմնական ուժերը կմոտենան:

❖ Պատրաստության մակարդակը պետք է լինի բարձր:

Սա առանց ներդաշնակության աշխատանք չէ գորակոչվածների համար: Սա մարտավարական որս է, որտեղ թևերում գտնվող յուրաքանչյուր հրաձիգ ունի իր ծածկույթը և նահանջի պահեստային երթուղին:

❖ Ինչպես է աշխատելու տանկը այս սխեմայում

Տանկերն ակտիվորեն օգտագործվելու են փակ դիրքերից՝ ոչ թե ճակատային հարձակման, այլ որպես շարժական հրետանի:

Ինչ է սա նշանակում.

- Տանկը չի երևալու առջնագծում, այլ գտնվելու է թաքստոցում:

- Աշխատելու է կանխորոշված համակարգով, առավել հաճախ թշնամու՝ գայթակղության գոտի մուտքի ուղղությամբ:

- Կրակի կառավարումը իրականացվելու է ճշգրտող դրոնների միջոցով:

- Խնդիրը ոչ թե զրահը ճեղքելն է, այլ հետևակայիններին ոչնչացնելը:

Կիրառումը ձեր աշխատանքում

Աշխատեք դրոններով: Մեկ ճշգրտող դրոնի աշխատանքը հավասար է տասը փրկված զինվորների կյանքերի:

Խաղացեք հակառակորդի նյարդերի հետ: Ստեղծեք խուճապի զգացում, թող թշնամին կարծի, թե դուք պարտվում եք: Մինչդեռ դուք պարզապես նշան եք բռնում:

Գայթակղելու մարտավարությունը վախկոտության մասին չէ, այլ հաշվարկի: Նրանք, ովքեր գիտեն գայթակղել, արդեն կես ճանապարհին են դեպի հաղթանակ: Մեզ համար դեռ ուշ չէ սովորել:

Աղբյուր՝

<https://m.ok.ru/group/70000001573931/topic/158505068698411?ysclid=mgc6dafds0411451591>